# ՀԱՆԴԷՍ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

---

## ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆՔ

## ՍԻԴՐՈՆԻՈՍԻ ՀՈՇԻՈՍԻ

*Ծանօթ. — Հոշիոս Սիդրոնիոս Ֆլանտրացի էր ազգաւ, հովուի որդի. սա մեծ յաջողամտութիւն ցուցընելով 'ի քերթողականին և մեծապէս փայլելով՝ անուանեցաւ ուսուցիչ բանասիրութեան. բայց յետ երկարամեայ վաստակոց հրաժարելով յամենայն պաշտամանց և առանձնանալով Ֆլանտրիոյ Թօնկըրի քաղաքը, մեռաւ հոն յամին 1653, 'ի հասակի 57 ամաց։ — Հոշիոս այլոց խնդրանօք գրեց չորս ողբերգութիւն Քրիստոսի չարչարանաց վրայ 'ի լատին բարբառ, որք մեծ ընդունելութիւն գտնելով՝ գրեթէ երեսուն անգամ տպագրեցան, և զանազան լեզուով թարգմանուեցան, ինչպէս և 'ի հայերէն։ Ունի Հոշիոս ուրիշ քերթուածներ ալ, ինչպէս ողբերգութիւնքն անուանեալք Արտասուք Պետրոսի, և Ընթացք մարդկային կենաց, որ յիւն ողբերգութեանց կը բաղկանայ, զորս պիտի հրատարակեմք յաջորդաբար, Հ. Մանուէլ Ջախջախեանի ծանօթ գրչին արդիւնքն ըլլալով։ Ըստ դատելոյ բանասիրաց՝ այնպէս հրաշալի են այս քերթուածքն թէ ըստ յօրինուածութեան և թէ ըստ լատինաբանութեան՝ մինչև հաւասարել Աւգոստեայ դարուն քերթուածոց, և համապատիւ լինել [illegible] քրիստոնէականն Որատեայ։*

### ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ

---

### ԸՆԹԱՑՔ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵՆԱՑ

Ծով է կենցաղ, որդիք մարդկան,
Ահ և ծըփանք լի յերկոսեան.
Ծով է կենցաղ՝ հաւատացէք,
Ո՛վ մահացու որդիք մարդկան։
Յերկուց սոցա և ոչ 'ի մին,
Հաւատք անքոյթ ինչ երևին.
Որչափ ալիք այտնուն 'ի ծով,
Այնչափ բռնմունք և 'ի նըմին։
Ծով նըշուակ յորձանուտօք,
Եւ ջըրասոյզ ղանիուլ վիմօք,
Նաև կենցաղ է անհամբաւ,
Աներևակ իւրովք ժայռօք։
Վէմք խորտակիչք են ժայռք ծովուն,
Եւ կենցաղոյս իւր ցանկութիւն.
Եղո՜ւկ զինև, քանի՜ քանի՜
Նաւըս կորոյս այս ժայռ թագուն։
Ծով տեղատուալ մակընթանոյ,
Յափըշտակի յուզմամբ ծըփոյ.
Եւ յիւր միայն յողդողդութիւն,
Միշտ հաստատուն անյողդողդ կայ։
Երբեմն ալիք յափըն բերին,
Երբեմն յափանց գընան մեկնին,
Անձամբ անձանց գան ընդ առաջ,
Անձամբ յանձանց յետըս փախչին։
Նոյն և կենցաղ 'ի ծուփս յուզէ,
Իւր երկպառակ դիմամարտէ.
Եթէ ըղձեզ եթէ ըղձերս
Իւրով ծըփմամբ յափըշտակէ։
Է զի յանձին օգտակարէ,
Մոսկայ ընդ վայր և խուսափէ.
Է զի առ իւր վընասակար,
Յանձին կորուստ վազեալ դիմէ։
Ուրախանայ և ցաւագնի,
Ակընկալէ և երկընչի.
Տեղ տայ անձին և ընդդէմ կայ,
Անգէտ անձին է իւրովի։
Ծով չէ յաւէտ տաժանական,
Քան ըզկենցաղ աշխարհական,
Եւ ոչ յաւէտ է զայրագին.
Եւ յայս և յայն՝ հըրէշք կայտառն։
Ընթացք ծովուն և մեր կենաց,
Են կեզակարծք լիք յարհաւրայ.
Երկաքանչիւր են արահետք,
Նաւաբեկման հասարակաց։
Հայիմ, զհարդ հողմունք վայրագ
Ըզծով տանջեն հարթայատակ.
Զիարդ 'ի վեր յարուցանեն,
Զալիս նորա լեռնաքատակ։
Բախի Եւրոս ընդ Զեփիւռին,
Եւ բարկ Հարաւ ընդ Հիւսիսին.
Եւ պատերազմ մըղեն դըժնեայ,
Ի մէջ ծովուն և ընդ ծովին։
Զինչ այլ տաի կենցաղ մարդոյն,
Բայց կռւ պայքար աղէտալոյն.
Խաղաղութիւն չիք 'ի ծովու,
Չիք և կենաց խաղաղութիւն։
Բայց թէ կայցէ խաղաղութիւն,
Ոչինչ քան զայն անյայտագոյն.
Բեկցէ ըզնա այժըմ Հիւսիս,
Զոր նախ եբեր զալեօք ջըրոյն։
Զի՞ նաւաստիդ 'ի զուր Հըգնիս,
Աղաչանօք հաշտել զալիս.
Խուլ պեղագոս ոչինչ լըսէ
Աղաչանաց՝ զոր կողկողիս։



digitised by A.R.A.R.@

Նոյն իսկ նեթեր քեզ որոտայ,
Աղաչանացդ ընդդէմ գոռայ.
Հողմ փետեկեր քոց կըտաւուց,
Եւ ըղձոյդ բան փեռեկատէ նա:
Բախեն ալիք ըզկուր հիգաց,
Ըզցըռկանաւ Թագաւորաց.
Զարժանաւոր և զանարժան,
Ցափըշտակեն յատակ խուրեանց:
Ցոլովագոյն և կամ Նոյնքան,
Ցուզի ալեօք անխըտրական.
Եւ ոչ նըւազ վըտանգաւոր,
Դըժնի չարեօք կեանք չարական:
Ո՞չ ապաքէն ծըփի համակ,
Ի մըրըրկաց սա հակառակ,
Ո՞չ ապաքէն զիւր խոխոջիւն,
Ցինքն ունի միշտ ծովու քաստակ:
Ոչ զոր յուզէ անհրեւական,
Ասողըն Այծուն Ոզէնական.
Եւ կամ ծագեալ Ըստերոպէ,
Կամ Տայգետէ Բազմաստեղեան:
Այլ զոր ինքեան անձամբ անձին,
Եւ զոր ոսոխք բազումք նըմին՝
Ցուզեալ չարժեն, բայց առաւել
Ինքըն անձին շարժէ ինքնին:
Թէպէտ արուեստ իբր 'ի բազում
Սանձէ զալիս կենաց ծովուն,
Բայց յերկոսեան յանցըս յերկբայս
Արուեստ յետնի յոլովագոյն:
Ոմն յառաջին, ոմն 'ի միջին,
Ոմըն սուզի յընթաց վերջին.
Բազում անգամ և 'ի դադար
Նաւաբեկիմք մեք զընդովին:
Հանգոյն վիճակ՝ ալէկոծէ
Զազգ և քաղաք՝ որ ծաղկեալն է.
Զարքայութիւնս ընդ արքայից՝
Հանգոյն վիճակ յափըշտակէ:
Զի մեծն Հըռովմ վըսեմական,
Զինուք, արամբք անյաղթական.
Որ եա այնքան անուանս 'ի գիր,
Եւ գոգ վերնոց էր զուգական.
Որ էր անձին մեծ յաղթանակ,
Քան զամենայն զիւր մըրցանակ.
Որ ընդ իւրև էր նըւաճեալ,
Զարեգական ըզկողմն երկեակ.

Զանձն իւր կարծէր գերականեալ,
Զայլոց տեսեալ վիճակ անկեալ.
Սակայն և նա կորեաւ նոյնպէս,
Ցիւրոց հողմոց նաւաբեկեալ:
Անկան 'ի վայր փառք գերունակ,
Կործանեցան գահաւորակք.
Եւ յաղթական ազգ խուժադուժ,
Զիտալական էառ գրօշակ:
Զոր նա եոես զըլորտ ծագաց,
Ցաղթահարեալ յեօթնեակ լերանց.
Ի յաղթիլն իւր եանս անկեալ,
Ի ձեռս այլոց օտարազգեաց:
Զայս քեզ ազդեմ որ ժըպըրհիս,
Ցոր հրամայէ թափ քո կըրից.
Որոյ մակոյկ խարխախ լուծեալ,
Ճախրէ զալեօք և չերկընչիս.
Զ'ի ոչ սարսէն ժայռք Գիանեան,
Եւ ոչ հըրէշք՝ որք 'ի լիւզ կան.
Ոչ թեկ սախտակք, ոչ աղխամողխք,
Ոչ գանձք սըփռեալք զալեօք համայն:
Որում չէ փոյթ զինչ հողմք ազդեն,
Զինչ և աստեղք քեզ խըրատեն.
Զինչ բարբառին նաև կոհակք,
Եւ զոր բացուստ եզերք գուշեն:
Զինչ հողամաղք նըշանակեն,
Ցափըն ճախրեալք 'ի խոր ծովէն.
Այդպէս ըզծով քո մոռացեալ,
Ոչինչ պակաս զանձինըդ քեզէն:
Բայց թէ ըզքեզ տալ չախորժես,
Ի մըրըրկաց խաղ և հանդէս.
Նոյնչափ մահուանս դու հաւատա,
Որչափ ալիս զալ տեսանես:
Ըզբազմահոգ ըզնաւաստիկ
Փոյթըն պահէ բարեբաստիկ,
Եւ ոչ ուստեք նա գոյանայ
Բայց յերկիւղէ նախատեսիկ:
Յորժամ ըզծով ըզհողմ զըննես,
Եւ զաստեղաց սեպ նըկատես,
Ասա ո՞ւր արդ աստղ աջողակ,
Սաստագաստից ե՞րբ իմ ծագես:
Այսպէս երբեք քեզ մի լիցի.
Լուծէլ զօրէն Կէիկէսի.
Եւ տալ հողմոց զուխտ անազան,
Ցետ չարդելոյ նաւափայտի:

## ԽԱԲԷՈՒԹԻՒՆ

Գեղեցիկ դէմքով, — Կըլոր աչքերով,
Իսկ մարմնով փափուկ — Քան ծառի ճընճղուկ,
Հեզունակ նայուածք — Քան զաղաւնայ աչք,
Բիւր անոյշ լեզու — Զինչ խորխուխ մեղու,
Ճըրթունք քաղցրաբան — Կ'արժեն ամէն բան.
Կ'երթայ մեծ շըքով — Մանրիկ քայլերով.
Թէ մէկ բան ասէ՝ — Սըրտներըն գերէ.
Եւ է ամօթխած — Ռ.տուիք կարմրած,
Այնպէս կ'երևայ — Գաբրիէլն ըլլայ՝
Որ գայ ըսելու՝ — Ողջ լեր, բերկրեալ դու:
Գարշ զազիր սեւքով — Մնացած միւս մասով.
Բայց ծածկէր մարմնոյն — Ցըդեղ կազմութիւն
Երկայն ըզգեստով — Ծալ ծալ խորշերով.
Եւ անոր ներքև — Կը պահէր գաղտ, սև
Թոյնի մէջ թաթխած — Զերկայլերն ոլորած:

(Ցորասոսթեան): — ԱՐԻՍՈԴՈՑ

digitised by A.R.A.R.@